

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ ԵՎ
ՀԱՇՎԱՆՂԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՅ-ՈՄ**

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունը, դառնալով Եվրախորհրդի անդամ (2001 թ.), պարտավորություն ստանձնեց երկու տարում ստորագրելու Եվրոպական սոցիալական խարտիան (վերանայված) և վավերացնելու այն: Դրա վավերացումը ՀՀ կողմից (2004 թ.), խարտիայում նոր սկզբունքների և արդիական գաղափարների հիման վրա ամրագրված սոցիալական իրավունքների և նպատակների իրագործման ստանձնումը նոր իրավիճակ ստեղծեցին ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականության մեջ: Կանխորոշվեցին նաև սոցիալական բարեփոխումների ընթացքը և ուղղությունները: Առաջնահերթ խնդիր դարձավ սոցիալական օրենսդրության համապատասխանեցումը եվրոպական չափորոշիչներին: Գործող օրենսդրության համապատասխանեցումը, այն է՝ նոր օրենքների ընդունումը, օրենքների իրականացման մեխանիզմների՝ ինստիտուտների, համակարգերի ստեղծումը ենթադրում են աշխատատար և երկարաժամկետ գործընթացներ:

Փորձենք քննել հաշմանդամության նկատմամբ Եվրոպական սոցիալական խարտիայում ամրագրված նոր մոտեցումը և ՀՀ-ում դրա իրականացման գործընթացները: 15-րդ հոդվածը հռչակում է. «Հաշմանդամներն ունեն անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքում մասնակցության իրավունք»¹:

Հոդվածը բաղկացած է երեք պարբերությունից: Առաջինի համաձայն՝ բոլոր հաշմանդամներն ունեն կրթության և ուսուցման (նաև մասնագիտական ուսուցման) իրավունք: Այն եվրոպական սոցիալական խարտիային միացած պետությունների պարտավորությունները սահմանում է հետևյալ կերպ. «1. Նպատակ հետապնդելով հաշմանդամների համար (անկախ տարիքից, հաշմանդամության բնույթից ու ծագումից) ապահովել անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքում մասնակցության իրավունքի արդյունավետ իրականացումը՝ կողմերը պարտավորվում են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված ընդհանուր ծրագրերի շրջանակներում բոլոր հնարավոր դեպքերում (կամ անհնարի-նության դեպքում՝ մասնագիտացված պետական կամ մասնավոր կազմակերպությունների միջոցով) հաշմանդամներին ուղղորդում, կրթություն և մասնագիտական ուսուցում տրամադրելուն»²:

Հաշմանդամները պետք է ինտեգրվեն մարդու կենսագործունեության հիմնական ոլորտներին, կրթությունը և ուսուցումը պետք է հասանելի լինեն սովորական ծրագրերով, և միայն դրանց անհնարինության դեպքում՝ հատուկ կառույցների միջոցով: Այս դրույթը վերաբերում է ոչ միայն երեխաներին կամ պատանիներին, այլ նաև չափափաս հաշմանդամներին: Օրենսդրությունը կրթության ոլորտում պետք է արգելի խտրականությունը հաշմանդամի նկատմամբ, իսկ պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի նրան անօրինական ձևով

¹ «Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված)», Եր., 2007, էջ 38:

² «Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագիր». Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով, Եր., 2006, էջ 125:

գրկելու, մեկուսացնելու կամ այլ կերպ կրթություն ստանալու իրավունքը մերժելու դեպքերում:

Երկրորդ պարբերությունը վերաբերում է հաշմանդամների զբաղվածության խնդրին: Պետությունները պարտավոր են «նպաստել նրանց աշխատանքի տեղավորմանը բոլոր միջոցներով, որոնք ուղղված կլինեն խրախուսելու գործատուներին վարձելու հաշմանդամներին՝ աշխատեցնելու աշխատանքային սովորական միջավայրում, և աշխատանքային պայմանները հարմարացնել հաշմանդամների կարիքներին, կամ, եթե դա հնարավոր չէ հաշմանդամության պատճառով, ապա, հաշմանդամության մակարդակի համաձայն՝ մշակել կամ ստեղծել պաշտպանված աշխատանքային պայմաններ»³: Այսպիսով, պետությունները պարտավոր են ապահովել աշխատուժի շուկայում հաշմանդամներին աշխատանքի տեղավորվելու հնարավորությունը, հատկապես աշխատանքային պայմանները հաշմանդամների կարիքներին համապատասխանեցնելու միջոցով:

Այս նպատակի իրագործման համար օրենսդրությունը պետք է արգելի աշխատանքում հաշմանդամության հողի վրա կատարվող խտրականությունը, ինչպես նաև հաշմանդամության պատճառով աշխատանքից ազատելը: Գործատուները պարտավոր են պահպանել այն մարդկանց աշխատատեղերը, ովքեր հաշմանդամ են դարձել աշխատանքի ժամանակ արտադրական վթարի կամ մասնագիտական հիվանդության պատճառով:

Երրորդ պարբերության շրջանակներն ավելի լայն են. այնտեղ նախատեսվող՝ հաշմանդամների սոցիալական ինտեգրման իրավունքը ենթադրում է, որ պետք է վերացվեն հաղորդակցմանը և փոխադրմանը խոչընդոտող արգելապատճենները՝ ապահովելով տրանսպորտի (ցամաքային, երկաթուղային, ծովային և օդային), կացարանների (հանրային, սոցիալական և մասնավոր), մշակութային ու ժամանցային (սոցիալական և սպորտային) միջոցառումների հասանելիությունը հաշմանդամների համար:

Հոդված 15-ը, ըստ էության, մարմնավորում է հաշմանդամության նկատմամբ նոր մոտեցումը. հաշմանդամությունն այլևս չի դիտվում որպես թիրախային խմբի կամ անհատի խնդիր, այլ համարվում է քաղաքացիության հարց, որն ազդում է ողջ համայնքի վրա, որը և պետք է վերացնի արգելապատճենները և վերջ դնի մեկուսացմանը: Հոդվածի առանցքային գաղափարն այն է, որ հաշմանդամները պետք է օժտված լինեն լիարժեք քաղաքացիությամբ, և այս առումով ունեն անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքում մասնակցության իրավունք⁴:

Հայաստանի Հանրապետությունը, ելնելով երկրի հնարավորություններից և նպատակահարմարությունից, վավերացրել է հոդված 15-ի 2-րդ և 3-րդ պարբերությունները: Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում սկսվել է օրենսդրության համապատասխանեցումը ստանձնած պարտավորություններին: Նշենք, որ սոցիալական ոլորտում անկախության տարիներին սկսված բարեփոխումները առաջին հերթին վերաբերել են հաշմանդամների սոցիալական պաշտպանության համակարգին: Անցումային շրջանում պետական հովանավորչական մոտեցման իսպառ բացակայությունը, մարդկանց նյութական կարողությունների շեշտակի նվազումը ուղղակիորեն ազդեցին հաշմանդամների վիճակի վրա՝ նրանց դարձնելով ավելի անպաշտպան և խոցելի: Իրավիճակը բարդանում էր նրանով, որ Սպիտակի երկրաշարժը, դարաբաղյան ռազմական հակամարտությունը էականորեն

³ «Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված)», էջ 38:

⁴ Տե՛ս «Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագիր», էջ 124:

ավելացրեցին հաշմանդամների թիվը: Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքն առաջինն էր սոցիալական բարեփոխումների ոլորտում, որը 1993 թ. ընդունեց ՀՀ Գերագույն խորհուրդը: Սույն օրենքը կարգավորում է հաշմանդամության կանխարգելման, բժշկասոցիալական փորձաքննության, հաշմանդամների վերականգնման, բժշկական սպասարկման, վերականգնողական պարագաներով ապահովման, կրթության և զբաղվածության սոցիալական պաշտպանության և այլ հարցեր: Օրենքը հանրապետության մյուս քաղաքացիների հետ հաշմանդամներին համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով սահմանում է նաև նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ և արտոնություններ տրամադրելու պետական քաղաքականության հիմնադրույթները: Հարկ է նշել, որ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքը հետագայում պարբերաբար ենթարկվեց փոփոխությունների ու լրացումների: ԱԺ-ն տարբեր ժամանակներում առնվազն 10 անգամ անդրադարձավ այս օրենքին: Այդ շրջանում օրենքներն ընդունվում էին հրատապ անհրաժեշտությունից և տվյալ պահի նպատակահարմարությունից ելնելով: Դեռևս չկային սոցիալական բարեփոխումների ընդհանուր հայեցակարգեր կամ երկարաժամկետ ռազմավարություններ, ուստի դրանք շատ արագ ենթարկվում էին փոփոխությունների: Երբ Հայաստանը դարձավ Եվրախորհրդի անդամ, միջազգային մի շարք փաստաթղթերով ստանձնեց պարտավորություններ, այդ թվում նաև սոցիալական, որոնք և ուղղորդեցին օրենսդրության ոլորտը: 2005 թ. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակեց և ՀՀ կառավարություն ներկայացրեց «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարությունը»: Այն ընդունվեց կառավարության կողմից՝ նպատակ ունենալով հստակեցնելու հաշմանդամների սոցիալական պաշտպանության համակարգի տեղն ու դերը սոցիալական քաղաքականության մեջ, ամրագրելու հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում տարվող քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև 2006-2015 թթ. իրականացվելիք միջոցառումները՝ ուղղված հաշմանդամների հիմնախնդիրների լուծմանը:

Ռազմավարությունը որպես գլխավոր նպատակ հռչակեց հաշմանդամության հետևանքների հաղթահարման միջոցով հաշմանդամների ներառումը հասարակության մեջ: Նրանում առանձնացվեցին հետևյալ խնդիրները.

- Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության բնագավառում հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղվածությունների ամրագրում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, որոնք կապահովեն այդ բնագավառում տարվող քաղաքականության մշակում և ռեսուրսների արդյունավետ օգտագործում:

- Հետազոտությունների միջոցով յուրաքանչյուր հաշմանդամ քաղաքացու կյանքի որակի բարձրացման համար անհրաժեշտ առաջնահերթությունների հաստատում և դրանց աստիճանական իրագործում:

- Հաշմանդամների լիարժեք մասնակցություն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

- Հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում հաշմանդամների և ոչ հաշմանդամների համար՝ անկախ սեռից, տարիքից, ազգությունից, դավանանքից և այլ գործոններից:

- Հաշմանդամների նկատմամբ խտրականության կանխարգելում և պայքար դրա ցանկացած դրսևորման դեմ:

- Հասարակության բոլոր խավերի իրազեկվածության բարձրացում հաշմանդամների՝ այլոց հետ հավասար իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

- Հաշմանդամների անկախ կյանք վարելու հնարավորության ընձեռում:

Ռազմավարության մեջ կարևոր տեղ է հատկացվում հաշմանդամ երեխաների կրթության ապահովմանը: «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կանոնակարգում է հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցողների կրթության հարցերը: Օրենքով նախատեսված է, որ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցողներն ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնելու դեպքում ընդունվում են պետական բարձրագույն և միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

Հաշմանդամների կրթության ապահովման ոլորտում իրականացված մի շարք հետազոտություններ և ամփոփագրեր բացահայտում են հետևյալ պատկերը. հաշմանդամ երեխաների կրթության կազմակերպումը հիմնականում իրականացվում է հատուկ դպրոցներում: Ներկայումս հանրապետությունում գործում են 38 հատուկ դպրոցներ, որոնք մասնագիտացված են հենաշարժական, մտավոր հետամնացություն, տեսողության և լսողության խնդիրներ, ինչպես նաև խոսքի ծանր խանգարում ունեցող երեխաների կրթության կազմակերպման ուղղությամբ: Այս դպրոցներում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 4500 երեխաներ: Հատուկ դպրոցներում հնարավորություն է ստեղծված կրթական ներուժը կենտրոնացնել և հասցեագրել դրա կարիքն ունեցող երեխաներին:

2002 թ. Հայաստանի հատուկ հաստատություններում գտնվող երեխաների կարիքների և իրավունքների հետազոտության արդյունքները վկայում են, որ այդ երեխաների կյանքի, զարգացման և պաշտպանության իրավունքները լրջորեն վտանգված են եղել: Հաստատություններից 80%-ում չեն ապահովվել սննդի համապատասխան քանակը և որակը, անբավարար մակարդակի վրա են եղել առողջապահական, կրթական և սոցիալական ծառայությունները, 75%-ի շենքային պայմանները չեն ապահովել երեխաների անվտանգությունը, 50%-ում չեն զբաղվել երեխաների ընդհանուր զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպմամբ, 80%-ում իրականացվող վերականգնողական ծրագրերը չեն համապատասխանել երեխաների կարիքներին, 30%-ում երեխաների հետ աշխատողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը եղել է անբավարար:

Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս երեխաների կարիքների լուծումը վերահասցեագրվում է գործող կրթական հաստատություններին և դրանց վերականգնավորված ստորաբաժանումներին⁵, այնուամենայնիվ, հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների բավականին սովալ մի խումբ դեմ է իր երեխային հատուկ դպրոց տանելուն: Պատճառները մի քանիսն են.

- Հատուկ դպրոցները մատուցվող կրթական ծառայությունների որակի և արդյունավետության տեսակետից գլխում են հանրակրթականներին:
- Հատուկ դպրոցները չունեն հարմարեցված կրթական ծրագրեր, հատուկ

⁵ Հատուկ կրթական հաստատություններում տեղավորված երեխաների խմբերում բազմաթիվ են կրթական հատուկ կարիքներ չունեցող երեխաները, որոնք զալիս են աղքատ ընտանիքներից և սովորում հաշմանդամ երեխաների համար նախատեսված հատուկ ծրագրերով: Այս դեպքում փաստորեն ոտնահարվում է այդ երեխաների կրթության իրավունքը:

գրականություն, կրթության արդյունավետության բարձրացմանն օժանդակող այլ միջոցներ:

- ՀՀ որոշ մարզերում հատուկ դպրոցներ ընդհանրապես չկան:

- Հատուկ դպրոցներում երեխաները մեկուսացված են սոցիալական միջավայրից:

Այստեղից հետևում է, որ այսօր ժամանակակից չափորոշիչներին համապատասխանող, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, ուսումնական ծրագրերով, մասնագիտական կադրերով հագեցված հատուկ դպրոցներն անհրաժեշտություն են, քանի որ ներկա պայմաններում հնարավոր չէ հանրակրթական դպրոցներում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ կույր, խուլ, խոր մտավոր խնդիրներով բոլոր երեխաների կրթությունը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման այլընտրանքային ձև է ներառական կրթությունը: Նախադպրոցական ներառական կրթության հիմնական նպատակն է ապահովել հատուկ կարիքներ ունեցող երեխաների վաղ մանկության զարգացումը իրենց հասակակիցների հետ համատեղ: Այսօր Հայաստանում գործում են նախադպրոցական ներառական 20 հաստատություններ (մանկապարտեզներ), որոնցից 9-ը՝ Երևանում, մնացածը՝ մարզերում: Նախադպրոցական ներառական կրթություն են ստանում 275 հատուկ կարիքներով երեխաներ: Նախադպրոցական ներառական կրթության ծրագիրը ՀՀ-ում 2000 թվականից իրականացնում է World Vision միջազգային բարեգործական կազմակերպությունը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ԿԳ նախարարարության հետ համատեղ: Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր երեխա հետազոտվում է բազմամասնագիտական խմբի կողմից, այնուհետև կազմվում է անհատական զարգացման ծրագիր, համաձայն որի՝ մանկապարտեզների մասնագետներն աշխատում են երեխաների հետ: Ներառական կրթությունը դպրոցում գործում է «Կրթություն բոլորի համար» կարգախոսով, որն այսօր 240 երեխայի համար իրագործվում է 14 հանրակրթական դպրոցներում (10-ը՝ Երևանում, 4-ը՝ Տավուշի մարզում):

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դեռ լիովին չեն կարող բավարարել հաշմանդամ երեխաների կրթական կարիքները: Դրանք առայժմ տեխնիկապես հարմարեցված չեն հաշմանդամության առանձնահատուկ խմբերին պատկանող երեխաների համար: Բացի այդ, ներառական կրթությունը ենթադրում է հատուկ կարիքներով յուրաքանչյուր աշակերտի համար անհատական մոտեցում: Անհատական ուսումնական պլանի համաձայն՝ աշակերտի հետ պետք է աշխատի բազմամասնագետ թիմը: Ըստ այդմ՝ դժվար է չհամաձայնել այն պնդման հետ, որ հանրակրթական դպրոցները դեռ չեն կուտակել նոր, անհատականացված կրթական ծրագրերով աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և փորձ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքն ապահովելու մեկ այլ հնարավորություն է տնային ուսուցման կազմակերպումը, որը հիմնականում իրականացվում է հատուկ այն երեխաների համար, ովքեր հաշմանդամության առանձնահատկության, ֆիզիկական միջավայրի անմատչելիության, ընտանիքում առկա խնդիրների և այլ պատճառներով դուրս են մնում կրթության համակարգից: Սակայն պետք է նշել, որ տնային ուսուցման արդյունավետությունը ցածր է, քանի որ այն կան ձևակերպվում է դպրոցում և չի իրականացվում, կան իրականացվում է բազմաթիվ բացթողումներով և թերություններով:

Հաշվի առնելով հետազոտությունների արդյունքները՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանության ռազմավարության մեջ առանձնացվում են հաշման-

դամ երեխաների կրթության ապահովման հետևյալ խնդիրները.

- Կրթության հատուկ կարիքներ ունեցող ոչ բոլոր երեխաներն են ընդգրկված հանրակրթական դպրոցներում և հատուկ ուսումնական հաստատություններում:

- Անբավարար է կազմակերպված հատուկ կարիքներով երեխաների տնային ուսուցումը:

- Սակավ են մախադալոցական ներառական մանկական հաստատությունները:

- Անբավարար է կրթության հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող մասնագետների թիվը (սուրբոմանկավարժներ, մանկական հոգեբաններ, արատաբաններ և այլն):

- Հանրակրթական դպրոցները և հատուկ ուսումնական հաստատությունները հարմարեցված չեն հաշմանդամ երեխաների պահանջումներին (մշակված չեն հատուկ ուսումնական ծրագրեր, շենքերը և դասասենյակները հարմարեցված չեն և այլն):

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ռազմավարության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամների զբաղվածության հիմնախընդրին: Զբաղվածության ցուցանիշը մեր երկրում, ցավոք, բավականին ցածր է, քեև ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է դրույթներ, որոնք երաշխավորում են հաշմանդամների աշխատանքի իրավունքի ապահովումը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքն անթույլատրելի է համարում հաշմանդամության պատճառով հաշմանդամի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ պաշտոնի բարձրացման մերժումը: Գործատուն չի կարող աշխատանքից ազատել համապատասխան հիմնարկներում բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնում անցնող հաշմանդամներին: Հաշմանդամի ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքի թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ: 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամանակի կրճատ տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի: Աշխատանքի ընդունվելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում:

Այսուհանդերձ, հաշմանդամներն աշխատաշուկայում շարունակում են մնալ անմրցունակ: Չկա հստակ տեղեկատվություն չգրանցված հաշմանդամ աշխատողների թվի վերաբերյալ: Նրանց զբաղվածության մակարդակը մնում է խիստ ցածր, բացի այդ, զբաղված հաշմանդամները, ելնելով աշխատանքը կորցնելու մտավախությունից, գործատուից թաքցնում են իրենց հաշմանդամությունը, ինչը կարող է հանգեցնել բացասական հետևանքների, ընդհուպ՝ նաև շահագործման:

Հաշմանդամների զբաղվածությանը վերաբերող օրենքների դրույթները հիմնականում չեն գործում: Իրավական ակտերով սահմանված չեն այն մեխանիզմները, որոնք թույլ կտան օրենքը չհարգող գործատուներին ենթարկել պատասխանատվության: Գործատուները, անկախ սեփականության ձևից, խուսափում են առաջարկվող պայմաններով հաշմանդամներին աշխատանքի ընդունելուց: Որոշ գործատուներ խախտում են օրենքը. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար չեն սահմանում կրճատ աշխատաժամանակ՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի: Խիստ ցածր է հաշմանդամների վարձատրությունը: Առկա աշխատատեղերը հարմարեցված չեն հաշմանդամների կարիքներին:

Հաշմանդամների թաքնված զբաղվածությունն ուսումնասիրված չէ: Հայտնի չեն դրա ոլորտները, աշխատանքի շահագործման ծավալները, ձևերը: Չեն գործում հաշմանդամներին թաքնված զբաղվածությունից և աշխատանքի շահագոր-

ծումից պաշտպանելու իրական մեխանիզմներ: Հաշմանդամների զբաղվածության խնդրի լուծման ուղիների փնտրտուքը չի ներառում հաշմանդամներին վերապահված աշխատատեղերի կամ հասարակական աշխատանքների ստեղծման ծրագրեր: Հաշմանդամների զբաղվածության ապահովման հարկային արտոնությունների կիրառումը կարող է զուգորդվել կոռուպցիոն ռիսկերի ավելացմամբ⁶:

Այսպիսով, կրթության ու զբաղվածության «դասական» ոլորտներում հաշմանդամների ներառվածության առումով հայ իրականությունը հեռու է Եվրոպական սոցիալական խարտիայի բարձր պահանջները բավարարելուց: Նշված ռազմավարությունը ընդհանրապես չի անդրադառնում չափահաս հաշմանդամների մասնագիտական կրթությանը: Իսկ զբաղված հաշմանդամները կազմում են աշխատունակների ընդհանուր թվի ընդամենը 8%-ը: Անշուշտ, բնական ռեսուրսներով աղքատ երկիրը որոշումներ կայացնելիս ելնում է իր հնարավորություններից: Կարևորը տվյալ երկրի ձգտումն է քայլ առ քայլ հասնելու իր առջև դրված նպատակների իրականացմանը:

Գնահատելի է, որ հաշմանդամների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը նոր իրավիճակում հատուկ ուշադրություն է դարձնում «ճիշտ կադրային քաղաքականության» կազմակերպմանը՝ այն համարելով ռազմավարական «կարևորագույն» ուղղություններից մեկը: «Որակյալ կադրային ապահովումը հնարավորություն կտա հասարակական կյանքի տարբեր բնագավառներում հաշմանդամների հիմնահարցերի լուծմանը մասնագիտական մոտեցում ցուցաբերելու»⁷, նշվում է ռազմավարության մեջ: Ըստ այդմ կարևորվում է որակյալ կադրերի անհրաժեշտությունը հաշմանդամների և ընդհանրապես սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում: Դրանով իսկ լուրջ հիմքեր են ստեղծվում հաշմանդամների սոցիալական պաշտպանության քաղաքականություն մշակողների, այն իրականացնողների և սոցիալական ոլորտի աշխատողներ պատրաստող հաստատությունների միջև ակտիվ համագործակցության համար: Սա նոր և կարևոր փուլի սկզբնավորումն է սոցիալական քաղաքականության մեջ: Կարծում ենք՝ այդ համագործակցությունը վաղ թե ուշ պետք է դառնա ինստիտուցիոնալ:

Р. М. МАТИРОСЯН — Европейская социальная хартия и стратегия социальной защиты инвалидов в РА. — При рассмотрении обязательств, взятых на себя Республикой Армения вторым и третьим пунктом статьи пятнадцатой социальной хартии, приоритетной становится проблема соответствия хартии законодательству. При этом важное значение придается стратегии социальной защиты инвалидов в 2006-2015 гг., в особенности, образованию и занятости инвалидов. Европейская социальная хартия оказывает значительное влияние на социальные реформы в Республике Армения, в частности, на создание современной системы социальной защиты инвалидов.

⁶ Նման արտոնություններ սահմանելու համար պահանջվում է մշակել բավականին լուրջ մեխանիզմ, այլապես փորձը ցույց է տալիս, որ դրանք կարող են դառնալ չարաշահման աղբյուր: Օրինակ՝ հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար 1995-1996թթ. գործատուներին տրված իրավունքները առիթ դարձան աշխատացուցակներում կեղծիքներ կատարելու՝ ոչ հաշմանդամներին որպես հաշմանդամի գրանցում և այլն: Այստեղից հետևում է, որ հաշմանդամին աշխատանքի ընդունելու համար գործատուին հարկային արտոնությունների և երաշխիքների տրամադրումը պետք է զուգորդվի խիստ վերահսկողությամբ, որի իրականացումը կապված է լուրջ ղեկավարությունների հետ:

⁷ «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը 2006-2015 թթ.», Եր., 2005, էջ 19: